

ՆԵՐԳԱՂԹԸ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ

Դ. ԿԱՐԱՒԱՆԸ ՊԻՏԻ ՄԵԿՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ ԱԿՏԸ

Նգիպսական մեծ օրաթերք Ահրամ ի Պոլսոյ բղրակիցը 20 Յուլիս բուսականով կը հեռագրէ.

«Հայերը կը շարունակեն իրենց անունները արձանագրել տալ՝ վերադառնալու համար Սովիեթական Հայաստան, կը կարծուի թէ շուտով ներգաղթողներու առաջին կարաւանը պիտի մեկնի»:

Պոլսէն ստացուած նամակի մը համաձայն ներգաղթել ուզողներու ըստուար թիւ մը սեւական կերպով դիմում կը կատարէ, օր առաջ մեկնելու համար Հայաստան, Սակայն, կ'ըսէ նամակագիրը, մինչեւ այսօր (21 Յուլիս) պատճենական ռեւէ քայլ չառնուեցաւ՝ կազմակերպելու համար փոխադրուիւնը, Թրքական օրջանակները — կ'աւելցնէ ան — այժմ մեծ վերապահութիւն ցոյց կուտան եւ թերթերը ռեւէ բան չեն գրեր ներգաղթի մասին:

Պուլկարիայէն եւ Ռումանիայէն ստացուած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ ներգաղթը սկսած է այդ երկիրներէն: Առաջին կարաւանը մեկնած է Պուլկարիայէն, երկրորդը պիտի մեկնի Ռումանիայէն: Երեւանէն ստացուած պատճենական տեղեկութեան մը համաձայն, Հայաստան այս տարի պիտի կրնայ ընդունիլ 40,000 ներգաղթողներ:

Դ. Կարաւանի պատրաստութիւնները կը շարունակուին Պէյրութի եւ Սուրիոյ քաղաքներու մէջ: Առաջին շոգեճառով մեկնելիքներու ցանկը լրանալու վրայ է, կ'ըսուի թէ ամսոյս վերջը պիտի փոխադրուի Դ. Կարաւանը, կը կարծուի թէ ամենաուշը թգոսոս 5ին մեկնած կ'ըլլայ Դ. Կարաւանը: